

ՎԱՐՉԱՏԱՐԱՌԵՎԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՁԵՐ

ՄԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

*ՀՊՏՀ անահեսական աշխարհագրաւրյան
ամրիոնի վարիչ, աշխարհագրական
զիտուրյունների դակառը, պրոֆեսոր*

ՎԱՐՉԱՏԱՐԱԾԽԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԱՀԱՆՁՈՒՄԻ ԳԻՏԱԿԱՆՈՐԾՆ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Մենք՝ հայերս, հպարտանում ենք, որ աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն ենք, որ տվել ենք գիտության, կրթության, մշակույթի, ռազմական գործի, ինչու չէ՝ նաև տնտեսության զարգացման բնագավառներում համաշխարհային ճանաչում ունեցող բազում ականավոր գործիներ: Այս ճշնարտությունը հայտնի է նաև աշխարհի առաջադեմ մարդկությամբ: Սակայն դատը ճակատագրի հետևանքով ավելի քան 300 հազ. քառ. կմ տարածքից մեզ մնացած այսօրվա անկախացած շուրջ 30 հազ. քառ. կմ (չհաշված ազատագրված ԼՂՀ-ն) տարածքում, տնտեսավարման բնագավառում, երբեմն այնպիսի սխալներ ենք թույլ տալիս, որ հետագայում շատ քանի ենք վճարում դրանց համար:

Դրա վառ օրինակներից մեկը մեր անգույքական Աևանա լճի «հողոտումն է», որի մակարդակը անհետատես ձևով 20 մետրով իջեցվել է, հետո էլ տառապանքով համաշխարհային առումով ճանաչում ունեցող եզակի այդ քաղցրահամ լիճը որպես այդպիսին պահպանելու համար հսկայական միջոցներ են ծախսվում: Նման ոչ մտածված տնտեսական գործունեության օրինակներից է նաև Հայկական ՍՍՀ քարձոր զարգացած, բազմայուղ արդյունաբերության և ինտենսիվ զարգացման ուղղությունում վրա դրված գյուղատնտեսության՝ տնտեսագիտական ոչ մի օրինաչափության չենթարկվող, մերողմերին չհամապատասխանող սեփականաշնորհումը, որի լիարժեք շտկման ճանապարհները դեռևս անհայտ են ու բավականին քարդ:

Ականավոր զորավար, վիլխոտիա Գարեգին Նժդեհը մեր ժողովրդին ուղղված մի քաց նաճակ-հոդված ունի՝ «Մենք պետք է փնտրենք ու գտնենք անհաջողությունների իրական պատճառները», որում նա նշում է. «Ինչո՞ւ հայ ժողովուրդը պարտություն կրեց, և ընկերները լրեցին նրան: Ո՞րն է դրա պատճառը, երկրի աշխարհագրական դի՞րքը, քրիստոնյա Եվրոպա՞ն, մուսուլման Ա՞միան, ճակատագի՞րը: Բողոքում են, դժգոհում, անիծում ճակատագիրը և անվերջ կրկնում, որ մենք գտնվում են մեծ խաչմերուկներում, որ վատն են այդ խաչմերուկները: Այսուել կա մի խղճուկ ճշմարտություն, բայց որքան առավելություններ հաշվի չեն առնվում: Չե՞ որ մեր լեռնաշխարհը անառիկ է, մեր լեռներից յուրաքանչյուրը անխցելի բնա-

կան արգելք է թշնամու համար: Չտևսնել դա և ողբալ ճակատագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ թույլի ու տկարի հոգեբանություն: Սա ոչ թե նախապաշար-մունք է, այլ առաքինության բացակայություն»¹:

Գարեգին Նժդեհի խիստ մտահոգության պատճառն այն էր, որ մենք մեր լեռնային երկիրը լավ չենք ճանաչում, լավ չենք յուրացնում և չենք կարողանում այն նպատակային օգտագործել ոչ միայն տնտեսական, այլև թշնամուց պաշտպանվելու առումներով:

Այս, մեր երկիրը բնույթով լեռնային է, կտրտված անդնդախոր կիրճե-րով, գետահովիտներով, որոնք պահանջում են տնտեսավարման, պաշտ-պանական յուրահասուկ մեթոդներ:

Դեռ իին ժամանակներից Հայաստանի տարածքում բնակավայրերը, հատկապես գյուղերը հիմնականում տեղաբաշխվել են լեռների ստորոտ-ներում, թշնամու համար անմատչելի վայրերում, իսկ համեմատաբար հարք տարածությունները օգտագործվել են հողագործության համար:

Բարձր լեռնային վայրերի բնակավայրերը տեղաբաշխվել են լեռների, բլուրների ստորոտներում, քանի որ դրանք ունեցել են պաշտպանական խոշոր նշանակություն: Այսօր էլ, հեռանկարում էլ (քանի որ դեռևս շրջա-փակված ենք թշնամի երկու պետություններով) այս գործոնը մեզ համար շատ խոշոր դեր է խաղալու: Դրա վառ ապացույցը 1988-1994 թթ. Ղարա-բաղյան ազատագրական պատերազմն էր, երբ Արցախի հատկապես բարձրադիր բնակավայրերը ավելի լավ պաշտպանվեցին թուրք-ազերինե-րի բարբարություններից: Ահա թե ինչո՞ւ այդ տարիներին ազատագրված այժմյան Շահումյանի (Քարվաճառի), Բերձորի (Լաշինի) հայկական տա-րածաշրջանների վերաբարձի մասին առհասարակ խոսք լինել չի կարող, քանի որ այդ լեռնային բնակավայրերից յուրաքանչյուրը մի ամրոց է: Պարզապես հարկ է դրանք ամրապնդել, բնակեցնել որպես մեր երկրի արևելյան շրջանների սոցիալ-տնտեսական, պաշտպանական հենարան-ներ:

Ամենամյա հոգատարության կենտրոնում պետք է լինեն նաև Հայաս-տանի Հանրապետության հատկապես լեռնային բնակավայրերը: Ի դեպ, մեր հանրապետության գյուղական բնակավայրերի, մասնավորապես՝ լեռ-նային համեմատաբար փոքր գյուղերի նկատմամբ անհեռատես և ցավակի հետևանքներ ունեցող վերաբերմունքն առկա էր դեռևս խորհրդային իշ-խանության տարիներին՝ մինչև 1960-ական թվականները:

Մինչ այդ, հանրապետության տարածքում եղել է շուրջ 1200 գյուղա-կան բնակավայր, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր կողեկտիվ տնտե-սությունը (կողխողը): 1950-ից մինչև 1960-ական թվականների վերջերը տե-ղի է ունեցել կոլտնտեսությունների խոշորացում, ըստ որի մեծ թվով փոքր տնտեսություններ ունեցող գյուղեր վերացել են: Այդ անհեռատես քաղա-քականության հետևանքով խորհրդային իշխանության տարիներին Հա-յաստանի վարչական քարտեզից վերացել է ավելի քան 270 գյուղական բնակավայր, որոնցից 50-ը միացել են քաղաքային բնակավայրերին: Իսկ դա նշանակում է, որ մեր ժողովուրդը կորցրել է սոցիալ-տնտեսական,

¹ Տե՛ս Խ. Գրամփյան, Մտորումներ անցյալի և ապագայի շուրջ, Եր., 2010, էջ 123-124:

պաշտպանական այդքան հենարան: Դրա հետ միասին (պրոֆեսորներ Նորայր և Թաթուլ Մանասերյանների հաշվարկով), շուրջ 500 հազ. հա մշակելի հողահանդակներ վեր են ածվել խոպանի, արոտավայրերի²:

Այժմ մեր հանրապետության տարածքում առկա գյուղական շուրջ 915 բնակավայր միավորված է 866 համայնքում³:

Հանրապետության տարածքից մեծ թվով գյուղական բնակավայրերի անհետացման սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները վերլուծելու փոխարեն, այժմ մեր կառավարման համապատասխան մարմիններում ինտենսիվ աշխատանքներ են տարվում գյուղական բնակավայրերի նոր՝ ավելի խոշորացման, գյուղական, այսպես կոչված, խոշոր համայնքների ստեղծման ուղղությամբ: Եվ որքան էլ որ զարմանալի է, այս ամենը կատարվում է տարածքային կառավարման «կատարելագործման» քողի տակ: Եվ այդ «կատարելագործման» հետևանքով հանրապետության 913 գյուղեր կմիավորվեն գյուղական 300 խոշոր համայնքներում: Կարելի է պատկերացնել, թե այս «ազգարային քաղաքականությունը» իրագործելուց 10-18 տարի հետո գյուղական քանի բնակավայր կմնա մեր վարչական քարտեզի վրա: Ինչպես արդեն նշել ենք, գյուղական բնակավայրերի պատկառելի մասը գտնվում է լեռնային, բարձր լեռնային վայրերում: Եթե այստեղ գտնվող մի քանի գյուղեր միավորվում են համեմատաբար խոշոր գյուղերի մեջ, ապա, դառը փորձը ցույց է տվել, որ կարճ ժամանակ անց ամրող ուշադրությունը հիմնականում սեռվում է այն գյուղի վրա, որտեղ գտնվում է համայնքապետարանը, իսկ «արքանյակ» գյուղերը անուշադրության պատճառով զրկվում են նորմալ գոյատևելու նախապայմաններից և ժամանակի ընթացքում վերանում են: Դրա ցավալի օրինակը հարյուրավոր անյացած բնակավայրերն են:

Իսկ ինչո՞ւ ենք 10-20 կմ հեռավորության վրա գտնվող գյուղերը փորձում անպայման միավորել: Ինչո՞ւ հնարավոր չէ մեր տիպիկ լեռնային փոքր երկրում պահպանել հազարամյակների ընթացքում ձևավորված, երկրի ազգային դեմքը բնութագրող, պաշտպանական հենարան հանդիսացող, թեկուց մի քանի հարյուր բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերը:

Այո՛, փորձը ցույց է տալիս, որ իրարից տարբեր հեռավորության վրա գտնվող գյուղական բնակավայրերը մեկ համայնքի մեջ միավորելու դեպքում սպասարկման օրենկուները՝ դպրոցը, մանկապարտեզը, հիվանդանոցը, կենցաղային միավորները, խանութները, սպորտային հաստատությունները և այլն, հիմնականում կենտրոնացվում են այն բնակավայրում, որտեղ գտնվում է համայնքապետարանը, անուշադրության են մատնվում նաև կից գյուղերը համայնքային կենտրոնին կապող ճանապարհները:

Ժամանակի ընթացքում անտեսված բնակավայրերի բնակչությունը ստիպված է լինում տեղափոխվել Երևան, հանրապետության մյուս քաղաքներ կամ հեռանում է հայրենիքից: Ահա այս և այլ պատճառներով հանրապետության բնակչության 35%-ը կենտրոնացել է Երևանում՝ դարձնելով այն գերծանրաբեռնված մայրաքաղաք:

²Տե՛ս «Բրավունք դե ֆակտո», 18.04.2011:

³Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, էջ 17:

Գյուղական բնակավայրերի նկատմամբ խիստ անուշադիր վերաբերմունքի պատճառներից է նաև շարունակվող արտագաղթը:

Թեև վերջին տարիներին մեր երկրից արտագաղթողների թիվը որոշ չափով նվազել է, սակայն արդեն եղածն էլ շատ ցավալի է:

2005 թ. արտագաղթել է 9.3 հազ., 2006 թ.՝ 8.0 հազ., 2007 թ.՝ 7.5 հազ., 2008 թ.՝ 6.7 հազ. 2009 թ.՝ 4.8 հազ. մարդ⁴:

Այսինքն՝ միայն նշված տարիներին հանրապետությունից արտագաղթել է Բերդ կամ Մարալիկ քաղաքների բնակչության թվի չափով հայ: Փաստորեն, վերը նշված հինգ տարիների ընթացքում հանրապետությունից հեռացել է 36.3 հազ. մարդ: Եթե այդ տարիներին ներգաղթածների թիվն էլ հաշվի առնենք, ապա կարելի է արձանագրել, որ միայն այդ ընթացքում հանրապետության բնակչության թիվը կրճատվել է 30.6 հազ. մարդով՝ մոտավորապես Արմավիր քաղաքի բնակչության թվի չափով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես վերջին տարիներին հանրապետությունից արտագաղթում է հիմնականում գյուղական բնակչությունը, ընդ որում՝ առավելապես դատարկվում են լեռնային և սահմանամերձ գյուղերը:

Զպետք է մոռանալ, որ մենք, փաստորեն, Աղբեջանի հետ դեռևս պատերազմի մեջ ենք, և, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքն էլ հաշվի առնելով, մեր թշնամու հետ ընդիանուր սահմանը կազմում է շուրջ 900 կմ: Ըստ որում, նախ հայտնի չէ, թե որքան կտևի հարաբերական խաղաղությունը, մյուս կողմից էլ, քանի որ դառը ճակատագրի թերումով մշտապես մենք սահմանակից ենք լինելու ազերի թուրքերի հետ, ուստի պետք է ճիշտ գնահատել հատկապես սահմանամերձ գյուղերի պաշտպանական անգնահատելի նշանակությունը:

Այսպիսով՝ մեր հանրապետության գյուղական բնակավայրերի խոշորացման քաղաքականությունը բոլոր՝ տարածքի լեռնային ռելիեֆային բարդ պայմանների, տրամադրութային առանձնահատկությունների, հողատարածքների պահպանման և օգտագործման, սոցիալ-տնտեսական զարգացման, արտահոսքի կանխման և հատկապես երկրի պաշտպանության հույժ կարևոր խնդիրների լուծման առումներով ընդունելի չպետք է համարել:

Անհրաժեշտ է ոչ թե իրարից տարրեր հեռավորության վրա գտնվող գյուղերը մեկ համայնքի մեջ ուղղակիորեն միավորել, որի հետևանքը դրանց ամայացումն է, այլ թեկուր մի քանի հարյուր բնակիչ ունեցող գյուղի անրապնդումը տեղում՝ սոցիալ-տնտեսական բոլոր մեթոդների կիրառմամբ:

Սա է մեր հազարամյակների պատմություն ունեցող գյուղական բնակավայրերի պահպանման և հայրենիքի պաշտպանության ու հավերժության ապահովման ճիշտ ճանապարհը, այլ ոչ թե դրանց ամայացումն ու հետագայում այդտեղ եղած պատմաճարտարապետական հուշարձանների, փլատակների ուսումնասիրությունը և դրանցով «հպարտանալը»:

⁴Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010, էջ 45:

Մեր հանրապետության սոցիալ-տնտեսական և առհասարակ տնտեսավարման բնագավառում թույլ տրված սխալներից մեկն էլ 1996 թ. շրջանառության մեջ դրված վարչատարածքային անհեռատես, ոչ մի առումով շիմնավորված նոր բաժանումն էր:

Վարչատարածքային բաժանման ժամանակ խիստ նուրբ, յուրահատուկ մոտեցումներ են պահանջվում հատկապես ռելիեֆային բարդ կառուցվածք ունեցող երկրներում: Յավոք, դրանք հաշվի չեն առնվել ՀՀ վարչատարածքային բաժանման գործող տարրերակը կազմելու: Բացի ռելիեֆային, կիմայական յուրահատկությունները նկատի առնելուց, յուրաքանչյուր երկրի տնտեսական, սոցիալական զարգացման համապատասխան շրջափուլ պահանջում է վարչատարածքային նոր բաժանում, որը կհամապատասխանի տվյալ ժամանակաշրջանի խնդիրների արդյունավետ լուծման պահանջներին:

Ելնելով այդ պահանջներից՝ մեր հանրապետության տարածքը 1920-ից մինչև 1995 թվականը չորս անգամ վարչական բաժանման է ենթարկվել:

Մասնավորապես՝ մինչև 1995 թ. ՀՀ տարածքը բաժանված էր 37 վարչական շրջանների (գյուղական), կային նաև քաղաքային 10 շրջաններ (8-ը՝ Երևանում, 2-ը՝ Գյումրիում): Հանրապետությունում մինչ այդ կար 30 քաղաք, այդ թվում՝ հանրապետական ենթակայության 21, շրջանային ենթակայության՝ 9: Կար նաև քաղաքատիպ 28 ավան: Գյուղական բնակավայրերի թիվը 942 էր, որոնք ընդգրկված էին 865 գյուղխորհուրդներում:

Ծնարժության դեմ շնեղանշելու համար ասենք, որ վարչատարածքային այդ բաժանումը կարևոր դրական դեր կատարեց:

1965 թվականին գործողության մեջ դրված վարչատարածքային բաժանման գոյության ժամանակաշրջանում գյուղական վարչական շրջանների բոլոր կենտրոնները արագորեն զարգացում ապրեցին: Դրանցում կառուցվեցին արդյունաբերական ձեռնարկություններ կամ մասնաճյուղեր, բնակելի շենքեր, կրթության, մշակույթի կենտրոններ, բարեկարգվեցին փողոցներ:

Անկասկած, վարչական կենտրոնի զարգացմանը պայմանավորվել է նաև տվյալ շրջանի մյուս բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը:

1995 թ. դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով հանրապետության տարածքը բաժանվել է 11 մարզերի (այդ թվում՝ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով): Հետո Երևանը դարձավ համայնք, և այժմ ՀՀ տարածքը բաժանված է 10 մարզի:

Այսպիսով՝ ՀՀ տարածքի այժմյան վարչական առաջին կարգի միավորները մարզերն են, 2-րդ կարգի վարչական միավորները՝ գյուղական և քաղաքային համայնքները:

Հանրապետության ամբողջ տարածքում մեր կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ 1996 թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված մարզային բաժանումը ոչ միայն իրեն չի արդարացրել, այլև շատ դեպքերում խոչընդոտել է սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հաղթահար-

մանը, տնտեսության վերակենդանացմանը, ներշրջանային կապերի զարգացմանը: Դա բացատրվում է նրանով, որ հաշվի չեն առնվել մի շարք հանգամանքներ: Այսպես՝

- ա) լեռնային բնույթը, ոելինֆային խիստ բարդ կառուցվածքը, մակերևույթի կտրտվածությունը.
- բ) կիմայական պայմանների բազմազանությունը և վերընթաց գոտիականության առանձնահատկությունները.
- գ) միասնական տրանսպորտային համակարգի բացակայությունը.
- դ) տնտեսության ճյուղերի մասնագիտացման ընդհանրությունը.
- ե) պատմականորեն ձևավորված ենթակառուցվածքների ընդհանրությունը:

Այս ամենը հաշվի առնելու դեպքում, հատկապես ներկա՝ անցումային ժամանակաշրջանում, կարծում ենք, նպատակահարմար չեր բնական պայմաններով, տնտեսության մասնագիտացման ուղղություններով խիստ տարրերվող տարածքները միավորել նույն մարզի մեջ: Մասնավորապես, ընդունելի չէ, որ մի կողմից՝ Նոյեմբերյանի, մյուս կողմից՝ Տավուշի տարածաշրջանները, Իջևանի տարածաշրջանի հետ միասին, նույն՝ Տավուշի մարզում են ընդգրկված: Օրինակ՝ պատկերացնենք, թե Նոյեմբերյանի տարածաշրջանի Բագրատաշեն, Լալվար կամ մյուս գյուղերի բնակչիները բազում հարցեր լուծելու համար այժմյան պայմաններում ինչպիսի դժվարություններով կարող են հասնել Իջևան:

Անհասկանալի ու ոչ մի առումով ընդունելի չէ նաև Արագածոտնի մարզի կազմի մեջ մի կողմից՝ Թալինի, մյուս կողմից՝ Ապարանի ու հատկապես Արագածի տարածաշրջանների ներառումը:

Սեր կարծիքով, բնական և պատմատնտեսական առանձնահատկությունները հաշվի առնելով, վերանայման կարիք ունեն նաև Լռու, Շիրակի, Սյունիքի, Կոտայքի մարզերի վարչատարածքային կառուցվածքները: Վարչական առումով վերակազմման կարիք ունի նաև Գեղարքունիքի մարզի տարածքը: Սևանի ավագանի վարչատարածքային 5 միավորները մեկ մարզում միավորելը անկառավարելի է դարձնում այդ ավագանը:

Այսպիսով՝ 1996 թ. սկզբից հապենակ կերպով գործողության մեջ դրված վարչատարածքային բաժանումը, այս ժամանակարնթացքում խիստ բացասարար է ազդել տարածաշրջանների տցիալ-տնտեսական վիճակի վրա: Նախկին 37 գյուղական շրջանների այն վարչական կենտրոնները, որոնց կարգավիճակը փոխվել է, բոլոր առումներով հետ են նահանջել⁵: Դրանց տնտեսությունը, տրանսպորտային ուղիները, փողոցները դուրս են մնացել ուշադրության կենտրոնից, և վիճակը շատ հեռու է բավարար համարվելուց: Այդ պայմաններում շատ դժվարացել է բնակավայրերի օպտիմալ կառավարումը և, որ շատ կարևոր է՝ բնակչության սպասարկումը: Վերջինս հույժ կարևոր հիմնախնդիր է:

Սիշտ պետք է իշել, որ այն ամենը, ինչ ստեղծված է, այդ բվում՝ վարչատարածքային բաժանումը, բնակչության կենսապայմանների բարելավման համար է. եթե չի ծառայում դրան, ապա դառնում է աննպատակ:

⁵Տե՛ս Ս. Մելքոնյան, ՀՀ վարչատարածքային նոր բաժանման հիմնախնդիրի մասին, Եր., 2002, էջ 8:

Այսպիսով՝ 1996 թվականից գործող վարչատարածքային բաժանման կերպը չի բխում Հայաստանի Հանրապետության քայլայված տնտեսության վերակենդանացման, տարածքային միավորների սոցիալ-տնտեսական բավարար զարգացման, հատկապես սահմանային շրջանների ամրապնդման պահանջներից:

Համոզված ենք՝ անցման ժամանակաշրջանում վարչատարածքային բաժանումը պետք է կատարվի ոչ թե վարչական միավորների խոշորացմամբ, այլ համեմատաբար փոքր միավորների ստեղծման ճանապարհով՝ նկատի առնելով վերը նշված յուրահատկությունները:

Հաշվի առնելով համապատասխան առանձնահատկությունները՝ տողերիս հեղինակը համակողմանի հիմնավորումներով ՀՀ տարածքը բաժանել է 19 մարզերի (այդ թվում՝ Մեղրու, Տավուշի, Նոյեմբերյանի սահմանային տարածաշրջաններին հատկացնելով հատուկ կարգավիճակ), որը քննարկվել և հավանության է արժանացել Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) գիտխորհրդի կողմից, և որոշումն ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով:

СЕРГЕЙ МЕЛКУМЯН

Заведующий кафедрой „Экономической географии“ АГЭУ, доктор географических наук, профессор

Административно–территориальное разделение требует научно обоснованные принципы.- Мы, армяне по истине гордимся, что являемся одним из древних народов мира. Однако, иногда мы в области социально-экономической деятельности допускаем такие недальновидные ошибки, что потом за это платим весьма дорого. Одним из таких типичных примеров является искусственное снижение уровня озера Севан. В настоящее время в наших руководящих организациях разрабатывается новая схема укрупнения сельских общин с тем, что вместо 866 сельских общин предусматривается иметь всего 300. Считаем, что эта недальновидная перестройка сельских общин совсем неприемлема ибо, как показала практика, многие высокогорные сёла со временем изчезают из нашей административной карты.

SERGEY MELKUMYAN

Head of the Chair of „Economic Geography“ at ASUE, doctor in Geographical Sciences, professor

Administrative-territorial division requires scientifically grounded principles.- The Armenians are proud of being one of the ancient nations of the world. Nevertheless, sometimes we make such short-sighted mistakes in the sphere of socio-economic activities, that after we have to regret and pay for our mistakes. One of the typical examples may be the artificial lowering of the level of Lake Sevan.

Currently in our supervising organizations a new scheme for strengthening rural communities is being worked out and instead of 866 rural communities there are going to be only 300. We consider that this shortsighted reconstruction of rural communities is unacceptable, as practical observations show that many highland villages can disappear from our administrative map within some period of time.